ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱԶՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՄՐՑՈՒՅԹ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԵՏԵՎՅԱԼ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Ծաղկաձորի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ (ծածկագիր 3.1-2).

Ապահովում է համայնքային ծառայության հետ կապված մատյանների վարումը և պահպանումը, աշխատանքային պայմանագրրի գրանցամատյանների վարումը և պահպանումը, մասնակցում է աշխատակազմի գործավարությանը, նամակագրությանը և արխիվային գործի վարմանը, մասնակցում է համայնքի ղեկավարի և ավագանու կողմից քաղաքացինրի ընդունելության կազմակերպմանը, հաշվարկում է համայնքային ծառայողների և համայնքապետարանի այլ աշխատակիցների աշխատավարձերը, իրականացնում է գանձապետական հաակարգի հետ տարվող աշխատանքներ, վարում է համայնքային ծառայողների վերաբերյալ գրանցամատյանը և փոփոխությունների դեպքում դրանք սահմանված կարգով և ժամկետում ներկայացնում համապատասխան մարմիններ :

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է ունենալ՝

1)ունի առնվազն միջնակարգ կրթություն.

2) ունի <<Աշխատանքային>> <<Ընտանեկան>> օրենսգրքերի, <<Համայնքային ծառայության մասին,>>, <<Հանրային ծառայության մասին>> <<Տեղական ինքնակառավարման մասին>>, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>>, <<Արխիվային գործի մասին>>, <<բյուջետային համակարգի մասին>> օրենքների, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

3) տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը.

4) ունի համակարգչով և ժամանակակից այլ միջոցներով աշխատելու ունակություն:

Մրցույթին մասնակցելու համար ՀՀ քաղաքացիները և փախստականի կարգավիճակ ունեցող անձինք պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

Դիմում մրցութային հանձնաժողովի անունով (լրացվում է փաստաթղթեր ներկայացնելիս)

- Տվյալ պաշտոն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների ու աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող

պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, դիպլոմների, վկայականների, աշխատանքային գրքույկի (վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք համապատասխան մարմնից) պատճենները բնօրինակների հետ միասին:

- Արական սեռի անձինք նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը բնօրինակի հետ միասին:
- Մեկ լուսանկար 3x4 սմ չափի:
- Անձնագրի պատճենը:

Փաստաթղթերը ներկայացնել անձամբ՝ անձը հաստատող փաստաթղթով:

Փաստաթղթերը ընդունվում են Ծաղկաձորի համայնքապետարանի աշխատակազմում (ք.Ծաղկաձոր, Օրբելի եղբայրների 9 հեռ. 0223 6-04-02) կամ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության ՏԻ և ՀԾՀ բաժնում (ք.Հրազդան, Կենտրոն վարչական շենք,հեռ. 0223 23413), ժամը 10:00ից մինչև 17:00, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Ներկայացվող փաստաթղթերի պատճենների հետ միասին անհրաժեշտ է ներկայացնել նաև դրանց բնօրինակները:Ներկայացված պատճենները ետ չեն վերադարձվում:

Մրցույթին մասնակցել ցանկացողները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել Ծաղկաձորի համայնքապետարանի աշխատակազմ և Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության ՏԻ և ՀԾՀ բաժին:

Մրցույթը կկայանա 2021թ. Օգոստոսի 12-ին, ժամը 11:00 Ծաղկաձորի համայնքապետարանի շենքում (ք.Ծաղկաձոր, Օրբելի եղբայրների 9 հեռ. 0223 6-04-02):

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 2021թ. Հուլիսի 28-ը ներառյալ:

Համայնքի ղեկավար Ա.Հարությունյան